# ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը** հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2022**թ. նոյեմբերի 21-ին, ժամը՝ 10:00-ին**
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ, **ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4 ՀԱՍՑԵՈՒՄ**

## ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

**Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2022թ. նոյեմբերի 2-ի թիվ 280-Ա հրամանով օտարման ենթակա ՀՀ տարածքային կառավարման նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռում հաշվառված տրանսպորտային միջոցներ**

| Հ/Հ | Լոտի հերթական համարը | Գույքի (լոտի) անվանումը | Գույքի (լոտի) գտնվելու վայրը | Գույքի (լոտի) տեխնիկական վիճակը | Գույքի (լոտի) վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ | Գույքի գնահատված արժեքը /ՀՀ դրամ/ | Լոտի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/ | Նախավճարը /ՀՀ դրամ/ | Մասնակցության վճարը /ՀՀ դրամ/ | Գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1 | AUDI A6 1.8L | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Հիմնական հանգույցները բավարար վիճակում են: Թափքի վրա առկա են որոշ վնասված մասեր և բացակա դետալներ, սրահի վիճակը՝ բավարար: Անվահեծերը և անվադողերը մաշված են: | Թող. տարեթիվ՝ 2003թ., ն/հ՝ LFVBA14B533006833 | 1 090 000 | 817 500 | 40 875 | 17 713 | 18 000 |
| 2 | 2 | NISSAN MAXIMA 3.0 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Հիմնական հանգույցները բավարար վիճակում են: Թափքի վրա առկա են որոշ վնասված մասեր, սրահի վիճակը՝ բավարար: Անվահեծերը և անվադողերը մաշված են: | Թող. տարեթիվ՝ 2004թ., ն/հ՝ JN1CA31C84T732999 | 1 040 000 | 780 000 | 39 000 | 17 150 | 18 000 |
| 3 | 3 | VAZ 21214-126-20 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Հիմնական հանգույցները բարվոք վիճակում են: Թափքը՝ բարվոք, վրան առկա են որոշ կոռոզյոն հետքեր, սրահի վիճակը՝ բավարար: Անվահեծերը և անվադողերը մաշված են: | Թող. տարեթիվ՝ 2007թ., ն/հ՝ XTA21214071865293 | 1 150 000 | 862 500 | 43 125 | 18 388 | 18 000 |
| 4 | 4 | VAZ 21074 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Վազքը՝ 269628 կմ, շարժիչի վիճակը՝ բարվոք, փոխանցման տուփը՝ անբավարար: Թափքի վիճակը՝ առկա է վնասվածքներ և կոռոզիայի ենթարկված մասեր: Այլ հանգույցների և դետալների վիճակը՝ /ընթացային մաս, կամրջակներ և այլ/ բավարար: Սրահի վիճակը՝ բավարար: Անվահեծերը և անվադողերը մաշված են: | Թող. տարեթիվ՝ 2000թ., ն/հ՝ XTA210740Y1348216 | 660 000 | 495 000 | 24 750 | 12 825 | 18 000 |
| 5 | 5 | VAZ 212113 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Վազքը՝ 712528 կմ, շարժիչի վիճակը՝ բարվոք, փոխանցման տուփը՝ խափանված: Թափքի վիճակը՝ առկա է  արտաքին և ներքին վնասվածքներ և կոռոզիայի ենթարկված մասեր: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/՝ անբավարար: Սրահի վիճակը՝ անբավարար: Անվահեծերը և անվադողերը մաշված են: | Թող. տարեթիվ՝ 1998թ., ն/հ՝ XTA212130W1354571 | 460 000 | 345 000 | 17 250 | 9 075 | 18 000 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 6 | GAZ 311000 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Վազքը՝ 191507 կմ, շարժիչի վիճակը՝ ոչ բարվոք, փոխանցման տուփը աշխատում է խնդիրներով: Թափքի վիճակը՝ առկա է վնասվածքներ և կոռոզիայի ենթարկված մասեր: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/՝ ոչ բարվոք, ունի վառելիքի արտահոսք: Սրահի վիճակը՝ բավարար: Անվահեծերը և անվադողերը մաշված են: | Թող. տարեթիվ՝ 2000թ., ն/հ՝ XTH311000Y0916936 | 270 000 | 202 500 | 10 125 | 5 513 | 18 000 |
| 7 | 7 | VAZ 21213 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Վազքը՝ 477066 կմ, շարժիչի վիճակը՝ բարվոք, փոխանցման տուփը՝ աշխատում է խնդիրներով: Թափքի վիճակը՝ առկա է վնասվածքներ և կոռոզիայի ենթարկված մասեր: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/՝ բենզինի պոմպը, խողովակները, ընթացքային որոշ մասեր ենթակա են վերանորոգման: Սրահի վիճակը՝ բավարար: Անվահեծերը և անվադողերը մաշված են: | Թող. տարեթիվ՝ 2000թ., ն/հ՝ XTA21213011539178 | 715 000 | 536 250 | 26 813 | 13 494 | 18 000 |
| 8 | 8 | VAZ 21214-126-20 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Վազքը՝ 151500 կմ, շարժիչի վիճակը՝ բավարար, փոխանցման տուփը՝ բավարար: Թափքի վիճակը՝ առկա է վնասվածքներ և կոռոզիայի ենթարկված մասեր: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/՝ բավարար: Սրահի վիճակը՝ վատ: Անվահեծերը և անվադողերը մաշված են: | Թող. տարեթիվ՝ 2007թ., ն/հ՝ XTA21214071855306 | 1 150 000 | 862 500 | 43 125 | 18 388 | 18 000 |
| 9 | 9 | GAZ 3110 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Վազքը՝ 195146 կմ, շարժիչը՝ բարվոք, փոխանցման տուփը՝ բարվոք, թափքի վիճակը՝ բարվոք: Սրահի վիճակը՝ բարվոք: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ՝ ընթացքային մասը բարվոք է, կախոցն ունի մասնակի վերանորոգման կարիք: Բացակայում է մարտկոցը: Անվահեծերը և անվադողերը մաշված են: | Թող. տարեթիվ՝ 2003թ., ն/հ՝ XTH31100031189899 | 675 000 | 506 250 | 25 313 | 13 044 | 18 000 |
| 10 | 10 | GAZ 3102 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Վազքը՝ 150900 կմ, շարժիչը՝ բարվոք, փոխանցման տուփը՝ բարվոք, թափքի վիճակը՝ բարվոք, ունի մասնակի ներկման կարիք: Սրահի վիճակը՝ բարվոք: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ՝ ընթացքային մասը բարվոք է, կախոցն ունի մասնակի վերանորոգման կարիք: Բացակայում է մարտկոցը: Անվահեծերը և անվադողերր մաշված են: | Թող. տարեթիվ՝ 2002թ., ն/հ՝ XTA31020021083380 | 755 000 | 566 250 | 28 313 | 13 944 | 18 000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | 11 | GAZ 3110 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Վազքը՝ 273800 կմ, շարժիչը՝ բարվոք, փոխանցման տուփը՝ բարվոք, թափքի վիճակը՝ առկա է որոշակի մասերի ծռմռվածք, ենթակա է մասնակի ներկման: Սրահի վիճակը՝ բարվոք: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ՝ ընթացքային մասը բարվոք է, կամրջակը ենթակա է վերանորոգման, կախոցը և էլեկտրականությունն ունեն մասնակի վերանորոգման կարիք: Բացակայում է մարտկոցը: Անվահեծերը և անվադողերը մաշված են: | Թող. տարեթիվ՝ 2003թ., ն/հ՝ XTH31100031190208 | 570 000 | 427 500 | 21 375 | 11 138 | 18 000 |
| 12 | 12 | HYUNDAI AZERA 3.3 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Վազքը՝ 218534 կմ, շարժիչը՝ բավարար, փոխանցման տուփը՝ բավարար, թափքի վիճակը՝ առկա է որոշակի վնասված հատվածներ, դիմապակին նույնպես վնասված է: Սրահի վիճակը՝ բարվոք: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ՝ ընդհնաուր առմամբ բավարար: | Թող. տարեթիվ՝ 2008թ., ն/հ՝ KMHFC41D19A390829 | 1 640 000 | 1 230 000 | 61 500 | 21 140 | 18 000 |
| 13 | 13 | VAZ 21074 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Վազքը՝ 600000 կմ, շարժիչը՝ բարվոք, փոխանցման տուփը՝ բարվոք, թափքի վիճակը՝ մասնակի կոռոզիա, առկա է որոշ մասերի ծռմռվածք: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ընթացային մասը բարվոք է, կամրջակը ենթակա է վերանորոգման, մարտկոցն ասարք է: Անվահեծերը և անվադողերը մաշված են: | Թող. տարեթիվ՝ 2008թ., ն/հ՝ XTA21074082735040 | 700 000 | 525 000 | 26 250 | 13 325 | 18 000 |
| 14 | 14 | DISA 2955 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Շարժիչ՝ ենթակա է վերանորոգման, փոխանցման տուփ՝ ենթակա է վերանորոգման, թափքի վիճակը՝ մասնակի կոռոզիա: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ընթացային մասի և մարտկոցի անսարքություն: Անվահեծերը և անվադողերը մաշված են: | Թող. տարեթիվ՝ 1999թ., ն/հ՝ X06295500X0000043 | 830 000 | 622 500 | 31 125 | 14 788 | 18 000 |
| 15 | 15 | CHEVROLET NIVA 21230 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Շարժիչ՝ բարվոք, փոխանցման տուփ՝ բարվոք, թափքի վիճակը՝ վթարված: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/ վթարի հետևանքով ընթացային մասի և մարտկոցի անսարքություն: Անվահեծերը և անվադողերը մաշված են, դիմացի ձախ անվահեծը և անվադողր վնասված: | Թող. տարեթիվ՝ 2010թ., ն/հ՝ X9L212300A0314150 | 1 650 000 | 1 237 500 | 61 875 | 21 163 | 18 000 |
| 16 | 16 | CHEVROLET NIVA 21230 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Շարժիչ՝ բարվոք, փոխանցման տուփ՝ ունի խնդիր, թափքի վիճակը՝ բարվոք: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ընդհանուր առմամբ բարվոք: Անվահեծերը և անվադողերը մաշված են, Մարտկոցը բացակայում է: | Թող. տարեթիվ՝ 2007թ., ն/հ՝ X9L21230070195446 | 1 100 000 | 825 000 | 41 250 | 17 825 | 18 000 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | 17 | NISSAN X-TERRA 4.0 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Շարժիչը՝ բարվոք, փոխանցման տուփը՝ անսարք, թափքի վիճակը՝ բարվոք, սրահը՝ բարվոք: Այլ հանգույցների և դետալների վիճակը/ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ընդհանուր առմամբ բավարար: Անվահեծերը և անվադողերը՝ բարվոք: | Թող. տարեթիվ՝ 2007թ., ն/հ՝ 5N1AN08W28C500584 | 3 280 000 | 2 460 000 | 123 000 | 24 830 | 18 000 |
| 18 | 18 | NISSAN X-TERRA 4.0 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Շարժիչը՝ անսարք, փոխանցման տուփը՝ բարվոք, թափքի վիճակը՝ բարվոք, սրահը՝ բարվոք: Այլ հանգույցների և դետալների վիճակը/ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ընդհանուր առմամբ բավարար: Անվահեծերը և անվադողերը՝ բարվոք: | Թող. տարեթիվ՝ 2007թ., ն/հ՝ 5N1AN08W98C500016 | 3 090 000 | 2 317 500 | 115 875 | 24 403 | 18 000 |
| 19 | 19 | KIA SORENTO 3.3L | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Թափքը՝ բավարար, շարժիչ՝ բավարար (ունի յուղի գերծախս), փոխանցման տուփ՝ բավարար, սրահ՝ բավարար, անվտանգության բարձիկները՝ անսարք, վարորդի դռան ապակին չի աշխատում: | Թող. տարեթիվ՝ 2008թ., ն/հ՝ KNAJC525395871148 | 2 740 000 | 2 055 000 | 102 750 | 23 615 | 18 000 |
| 20 | 20 | KIA SORENTO 3.3L | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Շարժիչը՝ անսարք, փոխանցման տուփ՝ բավարար, թափքի վիճակը՝ բարվոք, սրահը՝ բարվոք: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ընդհանուր առմամբ բարվոք: Անվահեծերը և անվադողերը մաշված են: | Թող. տարեթիվ՝ 2008թ., ն/հ՝ KNAJC525195881046 | 2 435 000 | 1 826 250 | 91 313 | 22 929 | 18 000 |
| 21 | 21 | KIA SORENTO 3.3L | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Թափքը՝ բավարար, ներկի վնասված հատվածներ, շարժիչ՝ անբավարար (անսարք), փոխանցման տուփ՝ բավարար, սրահ՝ բավարար, մարտկոցը՝ անբավարար: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ընդհանուր առմամբ բարվոք: Առջևի նստատեղերը գլխիկներով, ամրագոտիներով, հետևի նստատեղը պոկված, վարորդի նստատեղը մաշված, հետևի կողային լուսարձակը կոտրված: Անվահեծերը և անվադողերը՝ բարվոք: | Թող. տարեթիվ՝ 2008թ., ն/հ՝ KNAJC525495881042 | 2 190 000 | 1 642 500 | 82 125 | 22 378 | 18 000 |
| 22 | 22 | KIA SORENTO 3.3L | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Թափքը՝ բավարար, շարժիչ՝ բավարար, փոխանցման տուփ՝ բավարար, սրահ՝ բավարար, մարտկոցը՝ անբավարար, կենտրոնական փականը անսարք: Այլ հանգույցների և դետալների վիճակը/ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ընդհանուր առմամբ բարվոք: Անվահեծերը և անվադողերը՝ բարվոք: | Թող. տարեթիվ՝ 2008թ., ն/հ՝ KNAJC525595871149 | 2 890 000 | 2 167 500 | 108 375 | 23 953 | 18 000 |
| 23 | 23 | KIA SORENTO 3.3L | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Թափքը՝ բավարար, շարժիչ՝ անբավարար (անսարք), փոխանցման տուփ՝ բավարար, սրահ՝ բավարար, մարտկոցը՝ անբավարար: Այլ հանգույցների և դետալների վիճակը/ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ընդհանուր առմամբ բարվոք: Անվահեծերը և անվադողերը՝ բարվոք: | Թող. տարեթիվ՝ 2008թ., ն/հ՝ KNAJC525695871144 | 2 435 000 | 1 826 250 | 91 313 | 22 929 | 18 000 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | 24 | NISSAN PATROL 4.8 I | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Թափքը՝ բավարար, շարժիչ՝ բավարար (առջևի մասից ունի յուղի արտահոսք), փոխանցման տուփ՝ բավարար, սրահ՝ բավարար, մարտկոցը՝ անբավարար: Վազքաչափը անսարք, դիմապակին ճաքած, հակամառախուղային լապտերները չի աշխատում: Անվահեծերը և անվադողերը՝ բարվոք: | Թող. տարեթիվ՝ 2005թ., ն/հ՝ JN8FY15YX5X545536 | 7 300 000 | 5 475 000 | 273 750 | 33 163 | 18 000 |
| 25 | 25 | NISSAN PATROL 4.8 I | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Թափքը՝ բավարար, շարժիչ՝ բավարար (ունի յուղի արտահոսք), փոխանցման տուփ՝ բավարար, սրահ՝ բավարար, անվադողեր՝ 5 հատ բավարար, մարտկոցը՝ բավարար: | Թող. տարեթիվ՝ 2005թ., ն/հ՝ JN8FY15Y85X545616 | 7 690 000 | 5 767 500 | 288 375 | 33 602 | 18 000 |
| 26 | 26 | SHUANGHUAN SCEO 2.4 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Թափքը՝ բավարար, շարժիչ՝ բավարար (աշխատում է անկանոն), փոխանցման տուփ՝ բավարար, սրահ՝ բավարար, անվադողեր՝ բավարար, մարտկոցը՝ անբավարար: Թափքի վրա առկա են հարվածի հետքեր, ձախ հայելին կոտրված, նստարանի պաստառները մաշված, վարորդի արևիկը բացակյում է, աջ կողմի գիտառայի համակարգը կոտրված: | Թող. տարեթիվ՝ 2008թ., ն/հ՝ LHA020GD18AS11717 | 1 495 000 | 1 121 250 | 56 063 | 20 814 | 18 000 |
| 27 | 27 | VAZ 21074-120-21 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Շարժիչ՝ բավարար, անհրաժեշտ է տեխ. սպասարկում, փոխանցման տուփ՝ բավարար, մասնակի վերանորոգման կարիք ունի, թափքի վիճակը՝ մասնակի վերանորոգում, որոշակի տեղեր ենթարկվել է կոռոզիայի: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ենթակա են տեխ. սպասարկման, մեկնարկիչը ենթակա է վերանորոգման: Անվահեծերը և անվադողերը՝ բավարար: | Թող. տարեթիվ՝ 2005թ., ն/հ՝ XTA21074052216139 | 685 000 | 513 750 | 25 688 | 13 157 | 18 000 |
| 28 | 28 | GAZ 31105-120 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Շարժիչ՝ բավարար, փոխանցման տուփ՝ բավարար, մասնակի վերանորոգման կարիք ունի, թափքի վիճակը՝ մասնակի վերանորոգում, որոշակի տեղեր ենթարկվել է կոռոզիայի և ներկի քերվածքներ, բեռնախցիկի փականը ջարդված է, առջևի վահանակի ձախ կողմում փոքր կոտրվածք: Այլ հանգույցների և դետալների վիճակը/ընթացային մաս, կամրջակներ և այլ/առջևի կախոցը, արգելակման համակարգը և այլ ագրեգատներ ենթակա են տեխնիկական սպասարկման: Անվահեծերը և անվադողերը՝ բավարար: | Թող. տարեթիվ՝ 2006թ., ն/հ՝ X9631105061343803 | 855 000 | 641 250 | 32 063 | 15 069 | 18 000 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 29 | 29 | VAZ 21074-120-21 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Շարժիչ՝ բավարար, փոխանցման տուփ՝ բավարար, մասնակի վերանորոգման կարիք ունի, թափքի վիճակը՝ մասնակի վերանորոգում, որոշակի տեղեր ենթարկվել է կոռոզիայի: Այլ հանգույցների և դետալների վիճակը/ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ենթակա են տեխ. սպասարկման: Անվահեծերը և անվադողերը՝ բավարար: | Թող. տարեթիվ՝ 2005թ., ն/հ՝ XTA21074052216254 | 685 000 | 513 750 | 25 688 | 13 157 | 18 000 |
| 30 | 30 | VAZ 21074-120-21 | ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 | Շարժիչ՝ բավարար, փոխանցման տուփ՝ բավարար, մասնակի վերանորոգման կարիք, թափքի վիճակը՝ մասնակի վերանորոգում, որոշակի տեղեր ենթարկվել է կոռոզիայի, հետևի անվաթևը փոս ընկած, դիմավի ձախ թևը վնասված: Այլ հանգույցների և դետալների վիճակը /ընթացային մաս, կամրջակներ և այլ/ ենթակա են տեխ. սպասարկման, Անվահեծերը և անվադողերը՝ բավարար: | Թող. տարեթիվ՝ 2005թ., ն/հ՝ XTA21074052201436 | 650 000 | 487 500 | 24 375 | 12 638 | 18 000 |

** Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝ **«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն»** ՊՈԱԿ (**հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10**):*

**** Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը** (**ժամը**՝17:00-**ն**) **ներկայացրել է աճուրդի մասնակցության հայտ**:*

** Յուրաքանչյուր հաջորդ լոտի աճուրդը սկսվում է նախորդ լոտի աճուրդն ավարտվելուց հետո:*

***• Մասնակիցները վաճառվող լոտ(եր)ին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 հասցեում, զանգահարելով 043**-00-93-43 **և 044**-77-77-08 **հեռախոսահամարներով, յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00**-17:00-**ն, իսկ շաբաթ օրերին՝ մինչև ժամը 13:00-ն:***

***Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում աճուրդի ներկայացված լոտի (լոտեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «տեսել-համաձայնել է»:***

***Աճուրդի մասնակցության հայտերի ներկայացնելը և պայմանները՝***

** Աճուրդին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ **սեփականության իրավունք**, ինչպես նաև սահմանված ժամկետում Կազմակերպչին են ներկայացրել **աճուրդի մասնակցության հայտ**՝ աճուրդի մասնակցության համար **անհրաժեշտ փաստաթղթերով**:*

***Աճուրդի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերն են՝***

*- **նախավճարի վճարումը** հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, **պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը**), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության **թիվ 900018002171**, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ **աճուրդի նախավճար**՝ պարտադիր նշելով օտարման մասին որոշման (հրամանի) համարը և ամսաթիվը, լոտի հերթական համարը:*

*- **մասնակցության վճարումը** հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, **պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը),** մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության **թիվ 900018002981**, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ **աճուրդի մասնակցության վճար**՝ պարտադիր նշելով օտարման մասին որոշման (հրամանի) համարը և ամսաթիվը, լոտի հերթական համարը: **Մասնակցության վճարը գույքի (լոտի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում,***

*- իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման համարը, իսկ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ անձնագրի և սոցիալական քարտի համարը,*

*- հայտատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը).*

** Աճուրդի մասնակցության հայտը՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով ներկայացնելու դեպքում Կազմակերպիչը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական (տոմս), որի տրամադրումը դադարեցվում է աճուրդը սկսելուց առնվազն երեսուն րոպե առաջ:*

**Աճուրդի մասնակից չհամարվող անձինք  և այդ անձանց գործողությունների վարքագծի կանոնները՝**

- Աճուրդին կարող են ներկա գտնվել **դիտորդներ**՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը՝ 2000 **ՀՀ դրամ:**
- Դիտորդի տոմսերը վաճառվում են՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ում (հասցեն՝ ք.Երևան, Զաքիյան 10), իսկ աճուրդի օրը՝ Պետական գույքի կառավարման կոմիտեում ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը (հասցեն՝ ք.Երևան Տիգրան Մեծ 4):
- Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր:
- **Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:**

**Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝**

- Աճուրդի մասնակիցների **անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի** առկայությունը պարտադիր է, լիազորված անձի դեպքում՝ նաև **լիազորությունները հաստատող փաստաթղթերը**:
- Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի (տոմսի) համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:
- Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լոտի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լոտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:
- Աճուրդը անց է կացնում աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ (բարձրացնելով իր մասնակցության քարտը), որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով:
- Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:
- Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:
- **Աճուրդում գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը, իսկ գերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը պարտավոր է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել մասնակցի վկայականը (տոմս) և վճարել իր առաջարկած գնի հինգ տոկոսի չափով նախավճարը (ՀՀ օրենսդրությամբ սահմանված վճարման միջոցներով), որը սահմանված ժամկետում հետագա վճարումների չկատարման դեպքում չի վերադարձվում և փոխանցվում է ՀՀ պետական բյուջե: Գնորդը վճարումները կարող է կատարել նաև լիազորված անձի միջոցով:**
- Վճարման դեպքում՝ աճուրդի հաղթողի առաջարկած գնի հինգ տոկոսի չափով նախավճարի գումարը հաշվարկվում է հաղթողի (գնորդի) կողմից վճարման ենթակա գումարի մեջ և աճուրդի Կազմակերպչի կողմից փոխանցվում համապատասխան հաշվին:
- **Եթե աճուրդը համարվում է չկայացած հաղթող մասնակցի կողմից վճարումները սահմանված ժամկետում չկատարվելու կամ աճուրդային արձանագրությունը չստորագրվելու պատճառով**, ապա այդ դեպքերում հաջորդ աճուրդը կազմակերպվում է նույն պայմաններով՝ առանց մեկնարկային գնի նվազման: **Տվյալ մասնակիցը հայտարարված գույքի նոր աճուրդին չի կարող մասնակցել**:

* **Աճուրդի Կազմակերպիչը նախավճարը, աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում, վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին՝ մասնակցության հայտում նշված հաշվետիրոջ հաշվեհամարին:**

* **Համաձայն Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2022թ. ապրիլի 8-ի թիվ 99-Ա հրամանի՝**

- Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:
- Առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ՝ գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցնելով վերջին աճուրդի մեկնարկային գնի 15 տոկոսի չափով:
- Աճուրդում հաղթող ճանաչված անձն արձանագրությունն ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտի (լոտերի) գինը:

- Գնորդը պարտավորվում է գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարը վճարել գույքի գնի վճարման համար սահմանված ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական թիվ 1 բաժանմունք՝ 900018002981 հաշվեհամարին:
- Գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել տրանսպորտային միջոցի պետական հաշվառման հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գումարներն ու տուրքերը:
- Աճուրդի հաղթողի կողմից սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում մուծված նախավճարը չի վերադարձվում, աճուրդը համարվում է չկայացած և լոտ (եր)-ը վաճառելու նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ՝ նույն պայմաններով:

* ***Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, հասցե՝ ք.Երևան, Զաքիյան*** *10* ***կամ զանգահարել՝ 010***-*52-63- 32 , 043-06-07-16* ***հեռախոսահամարներով:***

***Ծանուցում***.
***«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված***.
*1. Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լոտի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լոտի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը:*
*Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:*
*2. Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:*
*3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:*
***Քրեական օրենսգրքի 196 հոդված***.
*Հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելը, որը խոշոր վնաս է պատճառել գույքի սեփականատիրոջը, սակարկություններ կազմակերպողին, գնորդին կամ այլ տնտեսավարող սուբյեկտին՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:*

**Ուշադրություն***.* ***աճուրդի ընթացքը տեսաձայնագրվում է՝ դրա օրինականությունը ապահովելու նպատակով:***